

## ՏԵՏԵՍԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔ

ԿԺՈՒԱՆ ԿԱՐԱԳԻ ԵՒ ԱՐԴԱՐ ԵՎԸ ՇՏԿԵԼՈՒ ՀԱՅՐ.

Կարագը կամ արդար եղը եթէ ատենին ինչպէս որ պէտք է աղած չէ, ու այն պատճառաւ կծուած է, պէտք է հալեցընել, ու երեսը ելած փրփուրը առնելին յետոյ էրած մրկուած հացի կեղեւ ծգել մէջը: Քանի մը բոլէին եղին կծու համն ու գէշ հոտը կերթայ, ու հացի կեղեւը գէշ հոտ մը կառնու: Երբեմն այս կերպով ալ կարելի է շտկիլ կծուած

եղը: Առաջ մարուր ջրով աղէկ մը կտրորես ու կլուանաս. այն լուացուած եղին վրայ նոր կթած աղէկ կամ կլեցընես ու կթողուս որ ութը ժամ այնպէս կենայ. յետոյ նորէն պաղ ջրով կլուանաս ու կաղես: — Խրիմու մէջ ոմանք եղին կծուութիւնը կիանին՝ թթուած մածուն խառնելով եղին մէջն ու յետոյ եղը նորէն հալեցընելով:

ՄՈՒՇՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԶՈՒԽՆԵՐԸ ՑԵՑԵ ՊԱՀԵԼՈՒ ՀԱՅՐԵՆԵՐ.

Ա. Քանի մը լաթի կտորներու մէջ մէկ մէկ քիչ քափուր (*լեավիրի*) ու կտաւատի հունտ (*լերկա թօնումու*) կապէ, ու այն ծրարիկները՝ պահելու մուշտակիդ կամ չուխաներուդ ծալքերուն մէջ ասդիս անդին դիր: Քափուրին ու կտաւատին հյոտէն ցեցը հեռու կփախչի:

Բ. Հագուստին կամ մուշտակին ծալքերուն մէջ քանի մը փունջ վայրի անանուխ (*նոսպան*

*նաևհայի*) դիր, անոր հյոտէն կփախչի ցեցը:

Գ. Մուշտակին կամ հագուստներուն մէջ տեղ տեղ ծխախոտ (*բիւրիւմ*) կամ թէ լուախոտ (*փիւրիսսի փարաշով*) ցանէ:

Այս ինարքները բանեցընելու ատեն՝ պէտք է նախ հագուստները աղէկ մը թափել, յետոյ ձիգ ձիգ փաթթել սաւաններու մէջ, կամ թէ յատկապէս անոնց համար կարուած պարկերու մէջ:

ՆԱՐԻՆՉ ԵՐԿԱՐ ԱՏԵՆ ԹԱՐՄ ՊԱՀԵԼՈՒ ՀԱՅՐ.

Նարինչը (*փորբուզալը*) եթէ ուզես երկար ժամանակ պահել, ամէն մէկը բամպակի կամ թոյլ թղթի մէջ փաթթէ ու հալեցուցած մեղրամոմի

մէջ թաթիսէ հանէ. մեղրամոմը վրան կմեալ կապածի պէս կմնայ, չթողուր որ մէջը ող անցնի, եւ անարատ կմնայ ամիսներով:

ՄԵՐԸ ՕՐԵՐՈՎ ՊԱՀԵԼՈՒ ՀԱՅՐ.

Մերը (*սիլիցիան*) կարելի է շաբաթներով ու ամիսներով պահել՝ այս կերպով: Սակաւիկ մը ջրի մէջ մաքուր ներմակ շաքար հալեցուր չափաւոր կրակի վրայ. շաքարին չափը՝ պահուելու սերին կէս ծանրութեամբը պիտի լինի: Նաքարը հալելին

յետոյ քանի մը վայրկեան եւս եփէ, այն շիրօալ սերին վրայ լեցուր ու աղէկ մը խառնէ. յետոյ երբոր պաղի, մաքուր շիշերու (*պուրիլիցիաներու*) մէջ լից, բերանները սունկով (*մանքարով, փրոցիայով*) ամուր փակէ ու պաղ տեղ պահէ: